ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ

Armenian
Chess Federation

ARMENIAN
CHESS FEDERATION

0025, Հայաստան, Երևան, Խանջյան 50
Armenia
Հեռ./ֆաքս՝ (374)10-570758
Էլ. փոստ՝ info@chessfed.am

50, Khandjian Str., 0025, Yerevan,

Tel./Fax: (374)10-570758
E-mail: info@chessfed.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ

ՈՐՈՇՈՒՄ

«1» հոկտեմբերի 2021 թ. № 14
Հաստատել որակավորման խորհրդի նիստի որոշումը և որակավորման մրցաշարերում անհարգելի բացակայող շախմատիստներին չթույլատրել հաջորդ երեք ամիսներին մասնակցել մրցաշարերին:

28.09.2021 թ. որակավորման խորհրդի նիստի
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն № 1

Նիստին մասնակցում էին՝
Խաչատրյան Վահագն (նախագահ)
Մեժլումյան Վահրամ
Սանթրյան Արարատ

Օրակարգ
1. Որակավորման մրցաշարերում անհարգելի բացակայող շախմատիստներին չթույլատրել հաջորդ երեք ամիսներին մասնակցել մրցաշարերին:

ՀԱՐՑ 1

Քննարկվեց Որակավորման մրցաշարերում անհարգելի բացակայող շախմատիստներին չթույլատրել հաջորդ երեք ամիսներին մասնակցել մրցաշարերին: Քանի, որ շատ հաճախ այն մասնակիցները, ովքեր արդեն չեն կարող կարգ լրացնել դուրս են գալիս մրցաշարից առանց զգուշացնելու:

Ծավալվեց մտքերի փոխանակություն:

ՈՐՈՇՎԵՑ

Որակավորման մրցաշարերում անհարգելի բացակայող շախմատիստներին չթույլատրել հաջորդ երեք ամիսներին մասնակցել մրցաշարերին: Որը ուժի մեջ է մտնում մոտակա ամսվա ամսի 1-ից՝ ցուցակները հրապարակելու պահից:

Մրցաշարի կազմակերպիչը կամ գլխավոր մրցավարը որակավորման հանձնաժողովին է ուղարկում անհարգելի բացակայող մասնակիցների ցանկը:

Հիմնականում անհարգելի բացակա է համարվում այն դեպքը, երբ շախմատիստը, առանց տեղեկացնելու չի ներկայանում հերթական տուրին և այդ պատճառով իր մրցակիցը ստանում է +, որը էականորեն դժվարացնում է որակավորման կարգ լրացնելը):

Վերահսկողությունը թողնել Հայաստանի որակավորման հանձնաժողովին:

Մրցաշարի ընթացքում մեկ + ստանալը, երբ մրցակիցը չի ներկայանում խաղին՝ հաշվել հաղթանակ:

Եթե մասնակիցը ստանում է bye պետք է այդ պարտիան համարել հաղթանակ, իսկ որակավորման կարգը ստանալ, ըստ մյուս տուրերի մրցակիցների որակավորման կարգերի թվաբանական միջինով:

Երկու + ստանալու դեպքում մասնակիցը իրավունք չունի ստանալ որակավորման կարգ:

Թույլատրել որակավորման կարգերը ֆիքսել մինչ մրցաշարի ավարտը: 4-րդ և 3-րդ կարգերի դեպքում մինիմալը 8 տուր, 2-րդ և 1-ին կարգերի համար՝ 9 տուր: Ընդ որում մասնակիցը ինքը պետք է գլխավոր մրցավարի ուշադրությունը գրավի այդ հանգամանքի վրա:

Եթե տվյալ շախմատիստը 3 անգամ հավաքել է համապատասխան նորմայից 0,5 միավոր պակաս, ապա նրան նույնպես շնորհել համապատասխան կարգը կամ բալը:

Անդրանիկ Մարգարյանի հուշամրցաշարում, Ջերմուկում անցկացվող Ստեփան Ավագյանի հուշամրցաշարում, Հայաստանի պատանիների և աղջիկների կիսաեզրափակիչ և եզրափակիչ մրցաշարերում, Երևանի պատանիների և աղջիկների մրցաշարերում, Շիրակի, Կոտայքի, (Լոռու) մարզային առաջնություններում շախմատիստները 4-րդ և 1-ին կարգ կարող են ստանալ մեկ անգամ կատարելով կարգ ստանալու պահանջները:

2-րդ և 1-ին կարգերի համար որակավորման մրցաշարեր. 9 տուր,

ժամակարգը՝

1. 90 րոպե յուրաքանչյուր կողմին մինչև պարտիայի ավարտը,
2. 60 րոպե յուրաքանչյուր կողմին մինչև պարտիայի ավարտը 30 վայրկյան հավելումով սկսած առաջին քայլից:

Երևանի բոլոր մրցաշարերում թույլ տալ միայն մեկ անգամ անցկացնել օրական 2 տուր: Միայն 4-րդ կարգի համար անցկացվող որակավորման մրցաշարում թույլատրել մրցաշարը անցկացնել օրական 2 տուրով:

Մարզերում 4-րդ և 3-րդ կարգերի համար անցկացվող մրցաշարերը պետք է տևեն առնվազն երեք օր, իսկ 2-րդ և 1-ին կարգերի համարանցկացվող մրցաշարերը՝ չորս օր:

Որոշումը ընդունվեց միաձայն և հաստատելու համար հանձնաժողովի նախագահ՝ Վահագն Խաչատրյանը դիմեց ՀՇՖ նախագահի առաջին տեղակալ՝ Սմբատ Լպուտյանին:

Որոշումը հաստատվեց ֆեդերացիայի նախագահի առաջին տեղակալի կողմից:

ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ս. ԼՊՈՒՏՅԱՆ